

## ՀՈՂԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ԱՆկախ Հայաստանի Հանրապետությունն առաջինը նախկին ԽՍՀՄ տարածքում իրականացրեց հողի սեփականաշնորհումը, ընդ որում այն սկսվեց դեռևս ԽՍՀՄ օրոք, վերջինիս պաշտոնական լուծարումից մեկ տարի առաջ Այդ ամենը կատարվեց «Սեփականության մասին» (հոկտեմբեր 1990) և «Գյուղացիական ու գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» ՀՀ օրենքների և ՀՀ հողային օրենսգրքի (հունվար 1991) ընդունումով և կիրառումով:<sup>1</sup> Այդ օրենքներում մանրամասն նշվում էր հողային օրենսդրության ընդունման կարևորությունը մասնավոր հողատիրության զարգացման համար, սահմանվում էին գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների գործունեության տնտեսական, կազմակերպչական սոցիալական պայմաններն ու իրավական հիմքը: «Գյուղացիական ու գյուղացիան կոլեկտիվ տնտեսությունների մասին» օրենքով 1991-1992թթ. լուծարվեցին հանրապետությունում եղած մոտ 900 կոլտնտեսություններն ու պետական տնտեսությունները, որոնք թողարկում էին ճյուղի արտադրանքի ավելի քան 90%-ը: Դրանց փոխարեն ձևավորվեցին 320 հազարից ավելի անհատական տնտեսություններ: Իբրև անհատական սեփականություն դրանց փոխանցվեց հողերի 66%-ը:<sup>2</sup>

ԱՆկախության ուղին բռնած ՀՀ-ում 1991թ.-ից տնտեսության ագրարային հատվածում կատարվեցին արմատական վերակառուցումներ: Ագրարային վերափոխումները ընդգրկում են գյուղատնտեսությունը և նրա հարակից ճյուղերի ու ոլորտների բազմակողմանի վերակառուցումը, վերափոխումը, այդ թվում.

- հողատիրության և հողի սեփականության համակարգի վերափոխում, մասնավորապես՝ հողի սեփականաշնորհման և պետականացման գործընթացների կարգավորում,
- գյուղատնտեսության գների, մթերումների համակարգի վերափոխում,
- հողի շուկայի, հատկապես առք ու վաճառքի, գրավադրման համակարգի կարգավորում,

<sup>1</sup> Տես Հայաստանի գործող օրենքների ժողովածու, 1990-1995 թթ 80-106:

<sup>2</sup> Տես Մինասյան Է. Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003թթ.), Եր., 2003, էջ 81:

➤ գյուղատնտեսության սպասարկումների և ենթակառուցվածքների համակարգի վերափոխում:

Այս կամ այն երկրի զարգացման կոնկրետ առանձնահատկությունները կարող են առաջին պլան մղել թվարկված գործոններից որևէ մեկը: Բոլոր դեպքերում ագրարային տնտեսության այս կամ այն խնդրի վերափոխումը, ի վերջո, անհրաժեշտաբար կապված է հարակից խնդիրների վերափոխումների հետ: Ինչ վերաբերում է հողի սեփականաշնորհմանը, այն ագրարային վերափոխումների միայն մի օղակն է:

Ագրարային հարաբերությունների գլխավոր տարրը, նրա առանցքը, ինչպես հայտնի է, հանդիսանում են հողային հարաբերությունները, որոնք հասարակության մեջ թելադրվում են հողի նկատմամբ սեփականության համակարգով:

Եթե հողային հարաբերությունների բովանդակությունը մեկնաբանենք հենց հողային օրենսգրքի համաձայն, ապա հողային են համարվում այն հասարակական հարաբերությունները, որոնք ծագում են հողի տնօրինման, տիրապետման և օգտագործման կապակցությամբ, ինչպես նաև հողային պաշարների կառավարման առնչությամբ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիների և իրավաբանական անձանց միջև: Հողային հարաբերությունների օբյեկտները հողամասերն են և դրանց նկատմամբ իրավունքները:<sup>3</sup>

Որպես անցումային շրջանի երկիր՝ ՀՀ-ն անկախության հռչակումից հետո, անցավ հողի համատարած սեփականաշնորհման և ագրարային հատվածի լիակատար ազատականացման ուղի, որը կատարվեց նախկին կոլխոզային-սովխոզային համակարգի համատարած վերացման հիմքի վրա: Անցումային փուլի հայկական տարբերակն ունեցավ այն առանձնահատկությունը, որ վերափոխումների նման գործընթացում մեծ ժամանակային խզում առաջացավ ագրոպարենային հատվածի տարբեր օղակների սեփականաշնորհման փուլերի միջև: Ենթադրելի է, որ հողի սեփականաշնորհումն իրականացվեց 1991-1992թթ., մինչդեռ գյուղատնտեսությանը իրացնող օղակների սեփականաշնորհումը ձգձգվեց մինչև 1996-2000թթ., որի հետևանքով համալիրի տարբեր օղակները սկսեցին գործել խիստ անհամաչափ:

1991թ.-ին հողի սեփականաշնորհումը ՀՀ-ում իրականացվեց՝ ելնելով հետևյալ սկզբունքներից

1. Հողը բաժանվեց գյուղի մշտական բնակիչներին՝ ելնելով առկա ընտանիքների քանակից և գյուղի հողային ռեսուրսներից Այստեղ նկատի ունենանք, որ խոսքը մշակելի հողատարածությունների մասին էր, հետևաբար

<sup>3</sup> Տես ՀՀ հողային օրենսգրքը, եր. 2005:

պարզ է դառնում, որ մեկ հողաբաժնի չափը յուրաքանչյուր գյուղի համար տարբեր մեծություն կարող էր ունենալ Հայաստանի յուրաքանչյուր գյուղական ընտանիք սեփականաշնորհման արդյունքում ստացավ միջին հաշվով 1,5 հեկտար գյուղատնտեսական հողատարածք, այդ թվում 1,1 հեկտար վարելահող:

2. Հողամասերի բաժանումը կատարվեց վիճակահանության սկզբունքով՝ ելնելով յուրաքանչյուր ընտանիքում ընդգրկված ծխերի քանակից: Ցանկության դեպքում մի քանի ընտանիք կարող էին հող ստանալ միևնույն դաշտից, որը հետագայում կոյուրացներ նրանց համատեղ աշխատանքների կազմակերպումը:

3. Հողը տրվեց գյուղացուն վճարովի, փոխհատուցումը սահմանվեց երկու տարվա, այսպես կոչված կադաստրային զուտ եկամտի 70%-ի չափով, որը հաշվարկված էր ըստ հողերի տեսակների (ռոռզելի, անբրդի, այգի և այլն): Այս փոխհատուցման զումարն այնքան չնչին էր, որ կարելի էր ասել՝ հողը գյուղացուն տրվեց անվճար կամ խորհրդանշական վճարով:

4. Գյուղատնտեսական մշակովի հողերի միջին հաշվով 20%-ը չսեփականաշնորհվեց՝ գյուղի հետագա զարգացման համար: Այդ տարածքները կարող են տրվել վարձակալությամբ օգտագործելու կամ այլ հանրային կարիքների համար: Եուկայական հարաբերությունների պայմաններում այդ հողերի արդյունավետ օգտագործումը պահանջում է աճուրդային սկզբունքով դրանց վարձակալում:

5. Նոր օրենսդրությունը թույլատրում է սեփականաշնորհված հողի ազատ տնօրինումը նրա տիրոջ կողմից, այդ թվում՝ օտարում, վաճառք, ժառանգելու իրավունք, վարձակալությամբ տալ կամ վերցնել, օրինական այլ գործարքներ կատարել, որոնք նախկինում արգելված էին:

Վերջապես, օրենքով նախատեսվում է տեղական իշխանության կողմից հողը հետ վերցնելու իրավունք, հատկապես այն դեպքում, երբ հողը մի քանի տարիների ընթացքում չի օգտագործվում կամ նրա տերը չի վճարում օրենքով սահմանված հողային հարկը: Այս կապակցությամբ նշենք, որ իրականում այս դրույթը չի գործում, քանի որ գյուղացիների մեծ մասն անվճարունակ է, չի վճարում հարկը:

Հատկանշական է այն փաստը, որ մասնավորեցումից հետո մեծ աշխատանք է տարվել սեփականության իրավունքի հավաստագրման ուղղությամբ: Այդ գործընթացի ամենամեծ դժվարությունը կազմել է կադաստրային քարտեզների ստեղծումը: Ըստ փորձագիտական գնահատականների, 2005թ.-ի դրությամբ ավարտվել է հավաստագրերի տրման աշխատանքների 20%-ը: Ընդ որում, պաշտոնական հավաստագրերը երաշխավորում են գյուղացու իրավունքն իր հողի նկատմամբ: Մասնավորապես, պաշտոնական

հավաստագրերը թույլ են տալիս գյուղացուն գրավ դնել իր հողը, սակայն այդ հնարավորությունը հազվադեպ է օգտագործվում, քանի որ բանկերը հողը որպես գրավի առարկա չեն ընդունում, բացառությամբ բարենպաստ տարածաշրջանների (օրինակ, Արարատյան դաշտի):<sup>4</sup>

Հողի սեփականաշնորհումով հաղթահարվեց հողի սեփականության պետական մենաշնորհը և սկիզբ դրվեց հողային նոր համարակազմ ձևավորմանը: Հողի սեփականաշնորհման հետևանքով հանրապետության բնակչության զգալի մասը դարձավ հողի սեփականատեր:<sup>5</sup> Այն տրվեց գյուղի բոլոր մշտական բնակիչներին (որոշ դեպքերում նաև քաղաքաբնակ նախկին գյուղացիներին), սակայն այդ երևույթն ունի ընդհանուր առմամբ հակասական բնույթ. մի կողմից, հողը տրվեց այնպիսի մարդկանց, ովքեր ակնհայտորեն ավանդական իսկական գյուղացի չեն, ուստի չեն կարող բավարար արդյունավետությամբ օգտագործել հողը: Մյուս կողմից, սակայն, հողի հավասար բաժանումը հավասար մրցակցության մեկնարկային պայմաններ էր ստեղծում, որը հետագայում կարող էր հանգեցնել լավագույն հողօգտագործողների ի հայտ գալուն:

Հողի սեփականաշնորհման մասին օրենքը, թեև Հայաստանում ընդունվեց տնտեսական ճգնաժամի ծանր պայմաններում, սակայն գյուղական բնակչությանն ապահովեց աշխատանքով և որոշ չափով նպաստեց նրա գոյության պահպանմանը, մեղմեց նաև սովի առաջացման հնարավորությունը: Որպես դրական հետևանք նշենք, որ ագրարային արմատական բարեփոխումները բարերար ազդեցություն ունեցան գյուղացիության աշխատանքային գործունեության բարձրացման գործում:

Այդ ամենի հետևանքով նոր հիմունքներով կազմակերպվեց արտադրությունն ու գյուղական կյանքը: Նորաստեղծ գյուղացիական տնտեսություններն այլևս հարկադրված չէին կատարել պլանային աշխատանք: Բացի այդ, հողի սեփականաշնորհման օրենքի կիրառումով զգալիորեն ավելացավ գյուղական բնակչությունը: Հողով բավարարվեց փախստականների մի մասը, վերակենդանացան նախկինում լքված մի շարք գյուղեր: Այդ ամենի շնորհիվ գյուղատնտեսական արտադրությունը սկզբնական շրջանում այնպիսի անկում չապրեց, ինչպես արդյունաբերությունը կամ շինարարությունը: Սակայն «կանաչ հեղափոխությունների» դարում գյուղատնտեսական արտադրության առաջընթացի գլխավոր կռվանը՝ գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումները՝ կատարելագործված տեխնիկական և տեխնոլոգիան,

<sup>4</sup> Տես Գոմցյան Ա., Խաչատրյան Ա., ՀՀ ագրարային ոլորտի զարգացման արդի հիմնախնդիրները, Եր., 2005, էջ 156:

<sup>5</sup> Տես Սկրտչյան Դ., Հողային հարաբերությունները և արդի ագրարային քաղաքակառուցման հիմնական ուղղությունները ՀՀ-ում, Երևան, 1997, էջ 14:

արտադրության մեջ արմատավորելն է ,որը հաճախ մանր արտադրության ուժերից վեր է:<sup>6</sup>

Անվիճելի է այն փաստը, որ հողի սեփականաշնորհումն ունեցել է դրական որոշ հետևանքներ, սակայն դժվար է ընդունել Հրանտ Բագրատյանի այն կարծիքը, որ հողային վերափոխումները միանշանակ դրական էին: Իր «Земельная реформа» աշխատության մեջ նա գրում է, որ «բարեփոխումների հայկական ուղին ավելի արդյունավետ եղավ, քան ռուսաստանյանը»:<sup>7</sup> Բնական է, որ այս լավատեսական մոտեցումը կարելի էր սպասել միայն վերափոխումների հեղինակից:

Պատահական չէ, որ հողի և մյուս արտադրամիջոցների մասնավորեցման, մասնավոր սեփականատերերի նյութական շահագրգռվածության և անձնական պատասխանատվության նկատելի բարձրացման պայմաններում, հողի և մյուս արտադրամիջոցների, արտադրական ենթակառույցների մասնատման-մանրատման պայմաններում մի շարք օբյեկտիվ-սուբյեկտիվ պատճառներով, գյուղացիական տնտեսությունների և դրանց սպասարկող, մթերող,վերամշակող, իրացնող և այլ կազմակերպությունների կարգավորված չլինելու, այդ գործում պետական կարգավորման և հովանավորման բացակայության հետևանքով, գյուղատնտեսական արտադրությունը ՀՀ-ում առաջընթացի փոխարեն կարճ ժամանակ անց սկսեց հետընթաց ապրել:

Դրական համարելով հողի մասնավոր սեփականության գաղափարը՝ նշենք, որ այդ վերափոխումների ընթացքում թույլ են տրվել մի շարք կոպիտ սխալներ ու բացթողումներ, որոնք, ի վերջո, բացասական ազդեցություն ունեցան ՀՀ ագրոպարենային համակարգի զարգացման վրա:Հողի արագընթաց սեփականաշնորհումը դրական էր միայն այն իմաստով, որ միանգամից վերացրեց համայնավարական ցածր արդյունավետ ագրարային համակարգը: Սակայն դրանում պետք է տեսնել արագ սեփականաշնորհման արմատական թերությունը,քանի որ այն վերացրեց նախորդ տնտեսակարգի ոչ միայն բացասական, այլ նաև դրական կողմերը:

Սակավահող հանրապետությունում հողի արհեստականորեն արագացված սեփականաշնորհման արդյունքները 2000թ.-ի դրությամբ չէին համապատասխանում ոչ պարենամթերքով ազգաբնակչությանն ապահովելու, ոչ էլ հողն արդյունավետ կերպով վարելու և գյուղացու առօրյա կարիքները բավարարելու պահանջներին: Սեփականաշնորհման հետևանքով առաջացած հողի որոշակի մասնատվածությունը ստիպում է այն մշակել հին եղանակով,

<sup>6</sup> Հ.Ֆահրադյան, ՀՀ ագրոարդյունաբերական համալիրի ձևավորման մի կարևոր հիմնախնդիր, Եկոնոմիկա, 1999, № 4, էջ 77:

<sup>7</sup> Баграмян Г., Земельная реформа, Ереван, 2003.

հիմնականում ձեռքով, զրեթե բացառելով գյուղատնտեսական որևէ տեխնիկայի կիրառումը:

Գյուղատնտեսական արտադրությունը սպասարկող ենթակառուցվածքը սեփականաշնորհմանը հաջորդած մի քանի տարիների ընացքում ի վիճակի չէին ապահովելու վառելանյութի, պարարտանյութի, սերմացուի, անգամ ոռոգման ջրի նվազագույն քանակություն հանրապետության մեծ մասում: Առավել մեծ թյուրիմացություն էր հողի համատարած սեփականաշնորհումից հետո անգամ հողի տնտեսական գնահատման արդյունավետ սկզբունքների բացակայությունը, հանգամանք, որը խիստ կարևոր է գյուղատնտեսական առումով կեսից ավելի անօգտագործելի հողեր ունեցող հանրապետության համար: Հաշվարկված է, որ արհեստական ոռոգման բացակայության պայմաններում բնական ոռոգումներով հանրապետությունում հնարավոր է ստանալ գյուղատնտեսական արտադրանքի միայն մեկ հինգերորդ մասը:<sup>8</sup>

Այստեղ անտեղին չի լինի, եթե նշենք նաև, որ անցումային տնտեսությամբ երկրներում ագրարային վերափոխումների իրականացման մակարդակի գնահատման տվյալներով, 77-ն 25 երկրների շարքում զբաղեցնում է 8-րդ հորիզոնականը:

Հողի սեփականաշնորհման ընթացքում բացի վերը նշված թեթևություններից, եղել են նաև այլ կոպիտ սխալներ, մասնավորապես.

Առաջին. մասնավոր սեփականատիրական հողօգտագործման անցնելը տևական գործընթաց է: Սեր երկրում հողի սեփականաշնորհումը կատարվել է ոչ թե գյուղացիների պահանջով, այլ իշխանության բարձրագույն մարմինների որոշումներով, ընդ որում բոլոր վայրերում այն կատարվել է միևնույն ձևով, առանց հաշվի առնելու տարբեր գոտիների առանձնահատկությունները:

Երկրորդ. սեփականաշնորհման ընթացքում թույլ տրված անարդարությունների և գործընթացի անհամաչափության հետևանքով, նաև սեփականաշնորհված հողերի անհավասար պտղաբերության պատճառով գյուղական բնակչության մի մասը ստիպված եղավ գաղթել քաղաքներ՝ աշխատանք փնտրելու՝ համալրելով գործազուրկների բանակը:

Երրորդ. Կուլտնտեսությունների և պետական տնտեսությունների լուծարման հետևանքով հանրապետությունում մշակվող, առանց այն էլ փոքր մակերես ունեցող հողակտորներն ավելի մանրատվեցին: Առավել բնակեցված և պտղաբեր շրջաններում տնտեսության միջին հողատարածքը 0,75 հա էր, իսկ երկրի հյուսիս-արևելքում և հարավ-արևելքում՝ 2,5 հա-ից մի քիչ ավելի: Գյուղացին հանդիպում էր մեծ դժվարությունների, քանի որ գյուղացիական տնտեսությունների համար հատկացված հողակտորների միջև երբեմն հեռա-

<sup>8</sup> Տես Մանասերյան Թ.Ն. որ տնտեսական քաղաքականության ուրվագծերը, Երևան, 2000, էջ 34.

վորությունը հասնում էր 15-20կմ-ի, որն առաջ էր բերում դրանք մշակելու բարդություններ:

Չորրորդ, հողը գյուղացուն հանձնելուց հետո պետությունը մի կողմ քաշվեց՝ թողնելով նրան միայնակ իր հողատերի հետ: Սակայն ագրարային ճգնաժամի պայմաններում դա մեծագույն սխալ էր, քանի որ այդ ճգնաժամը հաղթահարելու համար պետությունը պետք է գործունե հովանավորչական գործունեություն ծավալեր գյուղատնտեսության բնագավառում:

Հինգերորդ, Հողի սեփականաշնորհումը կատարվեց համատարած, այլ ոչ թե մաս-մաս: Թվում էր, թե հողի սեփականաշնորհումից հետո գյուղմթերքի արտադրությունը կավելանա, սակայն ստացվեց հակառակը: Որպես օրինակ նշենք, որ 1987թ.-ին արտադրվել է 285 հազար տոննա հացահատիկ, իսկ 1999թ.-ին 258 հազար:<sup>9</sup>

Վեցերորդ, Չուտ իրավական կարգավորման առումով նշենք, որ հողի հանդեպ սեփականության պետական ակտը փոխարինվեց հողի հանդեպ սեփականության (օգտագործման) իրավունքի յուրահատուկ թույլտվության վկայականով: Սակայն այդ դեպքում էլ 2002թ. դրությամբ գյուղացիների միայն 25%-ն ուներ այդ փաստաթղթից:<sup>10</sup> Բացի այդ պետական կադաստրի կողմից այդ թույլտվության վկայականներում ոչ մի նշում չի գրանցվել հողի տեսակի մասին՝ այգի, ցանքատարածություն և այլն: Դրա հետևանքով էր, որ հողի ազգային շուկան չէր կարող հանդես գալ իր ողջ չափերով:

Չնայած որ սրանք սեփականաշնորհման բացասական կողմերն են, սակայն այն իրականացնողները փորձում են այդ ծախողումների պատճառը փնտրել այդ տարիներին երկրում ստեղծված ընդհանուր տնտեսական ճգնաժամի մեջ, ինչը կարծում ենք միանշանակ սխալ է, քանի որ տարբեր երկրների փորձից կարող ենք հասկանալ, որ նման վերափոխումներն ուղղված պետք է լինեն ճգնաժամը հաղթահարելուն, այլ ոչ թե այն ավելի խորացնելուն:

Այս ամենը վերլուծելով՝ մենք եկել ենք այն եզրակացության, որ հողային հարաբերությունների իրավական կարգավորման ճանապարհին սմիրաժեշտ է հետևյալ քայլերի իրականացումը.

-Պետության արդյունավետ ներգործությունը հողի տնտեսական օգտագործման վրա

-հողի արդյունավետ վերաբաշխման պայմանների իրականացումը՝ ընդգրկելով նաև նրա գրավադրման արժեքի, որակով օգտագործելու կարգի և

<sup>9</sup> Տես Մինասյան Է., Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003թթ.), էջ 99:

<sup>10</sup> Багратян Г., Земельная реформа, с. 312.

հողահանդակների՝ իբրև առք ու վաճառքի առարկա շրջանառությունից երկարատև դուրս մնալն արգելակող կանոնների մշակումը:

- Հողի սեփականության համապարփակ և ապահովագրված իրավունքի ստեղծումը, որի նպատակը կլինի նրա առևտրական կենսունակության բարձրացումը:

Ի մի բերելով նշենք, որ պատմությունը վկայում է, որ մասնավոր սեփականությունը կարելի է վերացնել օրենսդրական ակտերով, սակայն ստեղծել այդ նույն արագությամբ հնարավոր չէ, այնպես, ինչպես հնարավոր չէ արդյունավետ կերպով սեփականաշնորհել հողը կամ վերափոխել տնտեսական հարաբերությունները:

### Գրականության ցանկ

1. Գոմցյան Ա., Խաչատրյան Ա., ՀՀ ագրարային ոլորտի զարգացման արդի հիմնախնդիրները, Երևան, 2005թ.:
2. Հայաստանի գործող օրենքների ժողովածու, 1990-1995թթ.:
3. ՀՀ հողային օրենսգիրք, Երևան, 2005թ.:
4. Մանասերյան Թ., Նոր տնտեսական քաղաքականության ուրվագծերը, Երևան, 2000թ.:
5. Մինասյան Է., Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003թթ.), Երևան, 2003թ.:
6. Մկրտչյան Հ., Հողային հարաբերությունները և արդի ագրարային քաղաքականության հիմնական ուղղությունները ՀՀ-ում, Երևան, 1997թ.:
7. Ֆահրադյան Հ., ՀՀ ագրոարդյունաբերական համալիրի ձևավորման մի կարևոր հիմնախնդիր, Էկոնոմիկա, 1999թ., № 4:
8. Баграмян Г., Земельная реформа, Ереван, 2003.